կողմից, բացի ճակատի երկու կաքաւներից, մի երրորդ կաքաւ եւս, մանեկաւորած, գլուխը յետ է դարձել, շատ նման ժ. դարու փղոսկրէ կազմով աւետարանի մի կաքաւին։ Սիւների խոյակները կիսաբոլորակի վերայ տափակ տախտակ, իսկ խարիսխներում ընդհակառակը։ Պայմանական ծառն այստեղ աջ կողմն է։ Այս խորանի տախտակների վերայ է գրուած. «Քս. Ա.ծ. ողորմեա Իգնատիոս նկարչի ամէն», եւ «Տր. Ա.ծ. ողորմեա ստացողի սորա ամէն»։

«Կանոն երրորդ յորս երեքն» (պատկ. 16) արժանի է ուշադրութեան ճակատի երկու ոճաւորած եւ կռուելու պատրաստ աքաղաղներով, պարանոցները եւ պոչերը մանեկաւորած։ Խորանի հիմք կազմող տախտակի վերայ գրուած է. «Մեղայ քեզ Ա.ծ. ողորմեայ ինձ Ա.ծ.», իսկ ներքեւի տախտակի վերայ. «յորժամ գայցես ի սոսկալի աւուրն»։ Սրան համապատասխան է կանոն չորրորդը, գեղեցիկ եւ մբրդով լի (կարմիր գնդակներ) կողովով։



Պատկ. 16

«Կանոն հինգ յորս երկուն» մի խորա-